ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՍԵՎԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՏՆՕՐԵՆ

REPUBLIC OF ARMENIA
MINISTRY OF NATURE PROTECTION
"SEVAN NATIONAL PARK"
STATE NON-COMMERCIAL ORGANIZATION

DIRECTOR

ք. Սևան, Կ. Բանակի 56, հեռ (+374 261) 2-40-44, 2-13-38
Sevan, K. Banaki 56, tel: (+374 261) 2-40-44, 2-13-38
WEB: www.sevanpark.am, e-mail: SevanAP@inbox.ru

N 0 25-138

« 30 » Մարտի 2015 թ.

ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով շրջանակային
համաձայնագրեր կնքած մասնակիցներին
ըստ ցանկի

«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ բնապահպանության նախարարության «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրերով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ապրանքը: Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում «ՇՀԱՊՁԲ-11/11(ՀՀԲՆՍԱՊ-ՇՀԱՊՁԲ-15/05)»:

Ապրանքի մատակարարման պայմաններն են՝ մատակարարում ք. Սևան, Կարմիր բանակի 56 հասցեով՝ <<Սևան>> ազգային պարկ>> ՊՈԱԿ-ի պահանջի հիման վրա՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում և բոլոր տեսակի ապրանքները պետք է լինեն բարձրորակ, չօգտագործված:

Հայտնում եմ, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Կարմիր բանակի 56, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ հասցեով, մինչև 2015 թվականի ապրիլ 09-ը, ժամը 11:00-ը:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է՝ Ք. Գուլանյանը:

Հայտերը կբացվեն Գեղարքունիքի մարզ ք. Սևան, Կարմիր բանակի 56, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ հասցեում, 2015 թվականի ապրիլ 09-ին, ժամը 11:00-ին:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ բնապահպանության նախարարության «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի նյութերի ձեռքբերումը:

ՀՀ բնապահպանության նախարարության «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կարիքների համար՝ տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի նյութերի (որը կազմված է՝ 70 չափաբաժիններից) տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև գնման առարկայի մանագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է հրավերի (ծանուցման) N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են՝ իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմումը (Հավելված N 2), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկը (Հավելված N 3): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում եմ կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՀՀ բնապահպանության նախարարության «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է ՝ sevanap@inbox.ru :

Եթե, Հրամանով հաստատված ցանկում ներառված կոնկրետ գնման գործընթացի մասով, ՀՀ նորմատիվ իրավական ակտով նախատեսված է, որ մասնակիցը Օրենքի 5-րդ հոդվածով նախատեսված պահանջներին իր տվյալների համապատասխանության ապահովման և/կամ գնահատման համար պետք է պատվիրատուին ներկայացնի այլ (լրացուցիչ) փաստաթղթեր և/կամ տվյալներ, ապա նշված փաստաթղթերը և/կամ տվյալները պատվիրատուին ներկայացնում է ընտրված մասնակիցը՝ մինչև կարգի 110-րդ կետի 7-րդ մասով սահմանված կարգով պայմանագրի կնքումը: Ընդ որում՝

- նման փաստաթղթերի և/կամ տվյալների ներկայացման և գնահատման կարգը սահմանվում է շրջանակային համաձայնագրով՝ հիմք ընդունելով Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի և կարգի 75-րդ կետի պահանջները,

- նման պահանջի դեպքում, մասնակիցներից պահանջող փաստաթղթերի ցանկը և վավերապայմանները, ինչպես նաև մասնակցության իրավունքի և որակավորման գնահատման կարգը պետք է նախատեսված լինի շրջանակային համաձայնագրեր կնքած մասնակիցներին պատվիրատուի կողմից ուղարկվող հրավերով (ծանուցումով)՝ հղում կատարելով ՀՀ նորմատիվ իրավական ակտի համապատասխան (կոնկրետ) դրույթին ի կատարումն որի պահանջվում են լրացուցիչ փաստաթղթերը և/կամ տվյալները:

Առդիր՝ 26 թերթ:

*Տնօրենի ժ/պ ՝ Վ.Գուլանյան*

*Ա. Հովհաննիսյան*
*Ք.Գուլանյան*
*Հեռ. 0261-2-13-38*

Հավելված № 1

# ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ
# ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ԼՎԱՑՔԻ ՆՅՈՒԹԵՐԻ
# № ՇՀԱՊՁԲ-11/11 (ՀՀԲՆՍԱՊ-ՇՀԱՊՁԲ-15/04) ծածկագրով գնման ընթացակարգի

| Չ/Հ | Ապրանքի անվանումը | Չ/Մ | Քանակը | Համառոտ բնութագիրը |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| **1** | **Թղթե անձեռոցիկներ** | **տուփ** | **200** | Անձեռոցիկ փափուկ, սեղանի՝ եռաշերտ, գունավոր, տարբեր չափերի, թղթի 1 մ$^2$ մակերեսի զանգվածը՝ 30 գ, խոնավությունը՝ 7,0 %, 100 հատանոց տուփերով, փափուկ թղթից: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված “Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի”: |
| **2** | **Անձեռոցիկ** | **տուփ** | **20** | Անձեռոցիկ գրպանի՝ խոնավ, կիտրոնի կամ խնձորի հոտով, բարձր որակի |
| **3** | **Խոհանոցի սրբիչներ 1** | **հատ** | **100** | Տնտեսական լաթեր՝ միկրոֆիբրայից, նախատեսված սեղանի մաքրման համար, չափերը՝ 30x30սմ: Բարձրորակ: Արտասահմանյան արտադրության: Անհատական տուփերով: |
| **4** | **Խոհանոցի սրբիներ 2** | **հատ** | **10** | Տնտեսական լաթեր՝ միկրոֆիբրայից, բարձր որակի, փոշու համար միկրոթելիկներով, ամուր, երկարակյաց, կլանում են փոշին, չթողնելով հետքեր, նախատեսված են՝ ապակիների, հայելու, համակարգի և հեռաուստացույցի էկրանի մաքրման համար: Բարձրորակ: Իսրայելական արտադրության: Անհատական տուփերով: |
| **5** | **Երեսի սրբիչներ** | **հատ** | **6** | Բամբակյա, հաստ, տարբեր գույների սրբիչներ՝ նախատեսված ձեռքերի և երեսների համար: Չափերը՝ ոչ պակաս՝ 40x90 սմ: Բարձրորակ: |
| **6** | **Սպասքի լվացման դետերգենտներ** | **հատ** | **40** | Բարձրորակ մածուկանման թանձր զանգված, օգտագործված հոտավորիչի հոտով, գույնը՝ ըստ լվացող միջոցների գույնի որոշման սանդղակի, ջրածնային ցուցիչը՝ (pH)[3] 9-10.5, Fairy տեսակի կամ համարժեքը, 0.5 լիտրանոց տարաներով, ձեռքի մաշկը չչորացնող, կիտրոնի կամ խնձորի հոտով: |
| **7** | **Սպասքի լվացման փոշի** | **հատ** | **30** | Սպիտակ կամ բաց կապտավուն հատիկավոր փոշի,փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH՝ 7.5-11.5 ֆոսֆորաթթվային աղերի զանգվածային մասը ոչ ավելիր 22 %, փրփրագոյացման ունակությունը ոչ ավել 200մմ, փրփուրի կայունությունը ոչ ավել 0.3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, ՀՍՏ 275-2007: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 16.12.04թ. թիվ 1795-Ն որոշմամբ հաստատված մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող, լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի COMET ֆիրմայի կամ համարժեքը, բարձրորակ: |
| **8** | **Զուգարանների մաքրման նյութեր** | **լիտր** | **20** | Բարձրորակ մաքրող, լվացող և ախտահանող բարձրորակ մածուկ, տարան՝ բադիկի տեսքով, DOMESTOS ֆիրմայի կամ համարժեքը, 1.5-2.0 լիտր տարողությամբ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9 | **Լվացքի փոշի ձեռքով լվանալու համար** | **տուփ** | **20** | Սպիտակ, բաց դեղնավուն կամ գունավորած հատիկավոր փոշի: Փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH-ը՝ 7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավելի 0,3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված "Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի" համաձայն: Ariel ֆիրմայի կամ համարժեքը, բարձր որակի: |
| 10 | **Հատակի մաքրման նյութեր** | **հատ** | **20** | Սպիտակ, բաց դեղնավուն կամ գունավորած հատիկավոր փոշի: Փոշու զանգվածային մասը ոչ ավել 5 %, pH-ը՝ 7,5-11,5, ֆոսֆորաթթվական աղերի զանգվածային մասը ոչ ավելի 22 %, փրփրագոյացման ունակությունը (ցածր փրփրագոյացնող միջոցների համար) ոչ ավել 200 մմ, փրփուրի կայունությունը ոչ ավելի 0,3 միավոր, լվացող ունակությունը ոչ պակաս 85 %, սպիտակեցնող ունակությունը (քիմիական սպիտակեցնող նյութեր պարունակող միջոցների համար) ոչ պակաս 80 %: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2004թ. դեկտեմբերի 16-ի N 1795-Ն որոշմամբ հաստատված "Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի" համաձայն: |
| 11 | **Օճառ 1** | **լիտր** | **30** | Հեղուկ օճառ, որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար) ոչ պակաս՝ «Չեզոք» և «Էքստրա» տեսակների համար 78 գ, «Մանկական» և «Սովորական» տեսակների համար 74 գ, սոդայանյութերի զանգվածային (վերահաշվարկված ըստ Na2O) մասը ոչ ավելի՝ «Չեզոք» տեսակի համար բացակայում է, «Էքստրա» տեսակի համար՝ 0,2 %, «Մանկական» տեսակի համար՝ 0,15 %, «Սովորական» տեսակի համար՝ 0,22 %, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)՝ (36-41) °C, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված «N 2-III-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոնների և նորմերի, մակնշումը և փաթեթավորումը: Бархатные ручки ֆիրմայի կամ համարժեքը, 250 մլ տարողությամբ տարաներով, ձեռքերի մաշկը սնուցող հատկությամբ, բարձր որակի: |
| 12 | **Օճառ 2** | **հատ/ 100գ** | **20** | Չորսուների, կտորների և այլ ձևերով, որակական թիվը (ճարպաթթուների զանգվածը վերահաշվարկված 100 գ կտորի անվանական զանգվածի համար) ոչ պակաս՝ «Չեզոք» և «Էքստրա» տեսակների համար 78 գ, «Մանկական» և «Սովորական» տեսակների համար 74 գ, սոդայանյութերի զանգվածային (վերահաշվարկված ըստ Na2O) մասը ոչ ավելի՝ «Չեզոք» տեսակի համար բացակայում է, «Էքստրա» տեսակի համար՝ 0,2 %, «Մանկական» տեսակի համար՝ 0,15 %, «Սովորական» տեսակի համար՝ 0,22 %, օճառից անջատված ճարպաթթուների պնդեցման ջերմաստիճանը (տիտրը)՝ (36-41) °C, նատրիումի քլորիդի զանգվածային մասը՝ 0,4 %-ից ոչ ավելի, անվտանգությունը՝ ըստ ՀՀ առողջապահության նախարարի 2005թ. նոյեմբերի 24-ի N 1109-Ն հրամանով հաստատված «N 2-III-8.2 օծանելիքակոսմետիկական արտադրանքի արտադրությանը և անվտանգությանը ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոնների և նորմերի, մակնշումը և փաթեթավորումը: Safeguard ֆիրմայի կամ համարժեքը, բարձր որակի: |
| 13 | **Հատակի մածիկ, հատակի փայլեցման և մակերևույթի պահպանման համար** | **կիլոգ րամ** | **2** | Չցնդող նյութերի զանգվածային մասը՝ ոչ պակաս 30 %-ից, կաթիլանկման ջերմաստիճանը՝ ոչ պակաս 75oC-ից, փայլեցնող հատկությունը ըստ փայլաչափ սանդղակի՝ ոչ պակաս 12-ից, թաղանթի ջրակայունությունը՝ ոչ պակաս 1 բալից, թաղանթի փոշեկուտակման հատկությունը՝ ոչ ավելի 0,8 մգ/սմ2-ից, չափածրարված 400 կամ 500 գրամանոց տուփերով: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **14** | **Սպունգ աման լվանալու** | **հատ** | **60** | Ուղանկյունաձև, երկարությունը 120 մմ, լայնությունը 70մմ, հաստությունը 25մմ, մի կողմից երեսապատված արհեստական բարձրորակ շփող կտորով: Vielda ֆիմրայի կամ համարժեքը |
| **15** | **Ռուլոնով զուգարանի թուղթ** | **հատ** | **100** | Երկշերտ կամ եռաշերտ, 9,8սմX12,5սմ, 150 թերթիկ, երկ. 18,75մ, պատրաստված գրելու թղթից, լրագրաթղթից և այլ թղթերի թափոններից, թույլատրված սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ պատրաստելու համար: Անվտանգությունը, փաթեթավորումը և մակնշումը՝ ըստ ՀՀ կառավարության 2006 թ. հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշմամբ հաստատված "Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի": Սպիտակ գույնի, բարձրորակ: |
| **16** | **Հատակի լվացման լաթ** | **հատ** | **10** | Լաթ հատակ մաքրելու և չորացնելու, մուգ գույների, որակյալ, չափերը՝ ոչ պակաս՝ 120 x 70 սմ |
| **17** | **Կահույք մաքրելու լաթ** | **հատ** | **10** | Լաթ փոշի մաքրելու համար, միկրոֆիբրայից, սրբիչատիպ, որակյալ, տարբեր գույների, չափերը՝ մոտ 30 x 40 սմ, Իսրայելական արտադրության, բարձր որակի |
| **18** | **Ապակի մաքրման լաթ** | **հատ** | **6** | Լաթ ապակի մաքրելու համար, չափերը՝ մոտ 30x40սմ,տարբեր գույների, բարձրորակ, Իսրայելական արտադրության, բարձր որակի: |
| **19** | **Փոքր կաթսաներ 1** | **հատ** | **1** | Կաթսա 2 բռնակով կերամիկական՝ 5 լիտր տարողությամբ, թափանցիկ կափարիչով, բարձր որակի |
| **20** | **Փոքր կաթսաներ 2** | **հատ** | **1** | Կաթսա թավայի ձևով, կերամիկական՝ 5 լիտր տարողությամբ, թափանցիկ կափարիչով, բարձր որակի |
| **21** | **Ավելներ** | **հատ** | **30** | Սենյակի հատակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում (350-500) գրամ, երկարությունը (85-90) սմ, ավլող մասի լայնքը (35-40) սմ, չճռճվող, բարձր որակի |
| **22** | **Կահույքի փայլեցման միջոց** | **հատ** | **10** | Փայլեցնող միջոց փայտյա կահույքի համար. աերոզոլային փաթեթվածքով կամ հեղուկի տարաներով: բարձրորակ, ընկույզի հոտով: |
| **23** | **Ապակի մաքրելու միջոց** | **հատ** | **8** | Չափածրարված 0.5կգ զանգվածով: Անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ՀՀ կառավարության 2004թ. Դեկտեմբերի 16-ի 1795-Ն որոշմամբ հաստատված մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգի Fresh ֆիրմայի կամ համարժեքը, բարձր որակի: |
| **24** | **Լամպ՝ գնդաձև, շիկացման թելիկով, 100 Վտ, E-27, 36 Վ** | **հատ** | **150** | Գնդաձև, 100 Վտ հզորությամբ, կոթառը՝ E27 տիպի, 36 Վ լարման: Անվտանգությունը՝ ըստ ԳՕՍՏ 28712-90 և ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված՝ ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի, բարձր որակի, անհատական տուփերով: |
| **25** | **լամպ՝ լյումի-նեսցենտային, 36 Վտ, 220 Վ** | **հատ** | **20** | Խողովակաձև լյումինեսցենտային լամպ՝ 36 Վտ հզորությամբ, ուղիղ, 220 Վ լարման, 50 Հց հաճախականության, 1200 մմ երկարությամբ, գործարանային փաթեթավորմամբ, ըստ ԳՕՍՏ 6825-91-ի կամ համարժեք, լամպերի վրա համանուն ֆիրմայի նշագրմամբ: Անվտանգությունը՝ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված՝ ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի, բարձր որակի, անհատական տուփերով: |
| **26** | **լամպ՝ հայե-լատիպ, շի-կացման թելիկով, 60 Վտ, R 63, E27, 220 Վ** | **հատ** | **50** | Լամպ՝ հայելատիպ, 60 Վտ հզորությամբ, կոթառը՝ E27 տիպի, R 63, 220 Վ լարման, լամպերի վրա համանուն ֆիրմայի նշագրմամբ: Անվտանգությունը՝ ըստ ԳՕՍՏ 28712-90-ի և ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված՝ ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի, բարձր որակի, անհատական տուփերով: |
| **27** | **լամպ՝ հայե-լատիպ, շի-կացման թելիկով, 100 Վտ, R 80, E27, 220 Վ** | **հատ** | **20** | Լամպ՝ հայելատիպ, 100 Վտ հզորությամբ, կոթառը՝ E27 տիպի, R 80, 220 Վ լարման: Անվտանգությունը՝ ըստ ԳՕՍՏ 28712-90-ի և ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված՝ ցածր լարման էլեկտրասարքա- վորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի, բարձր որակի, անհատական տուփերով: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 28 | **Բաժակներ** | **տուփ** | 4 | Հյութի բաժակ՝ թափանցիկ, կոմպլեկտ, կոմպլեկտում՝ 6 հատ, բարձրությունը՝ ոչ պակաս 14 սմ-ից, տրամագիծը՝ ոչ պակաս 6 սմ, կլոր կամ բազմանկյունաձև: |
| 29 | **Թեյի կամ սուրճի փոքր բաժակներ** | **տուփ** | 4 | Բաժակ սուրճի ճենապակյա, նուրբ երանգների՝ սպիտակ կամ այլ բաց գույնի, կամ նուրբ ծաղիկներով, բարձր որակի, բարակ, կոմպլեկտ, կոմպլեկտում՝ 6 բաժակ, 6 ափսե, առանց թերությունների: |
| 30 | **Բահեր 1** | **հատ** | 17 | Բահ շինարարական, պոչով, այգեբանջարանոցային աշխատանքների համար: Ռուսական արտադրության, Սուր, մեծ |
| 31 | **Բահեր 2** | **հատ** | 17 | Բահ շինարարական, պոչով, այգեբանջարանոցային և բեռնման, բեռնաթափման աշխատանքների համար: Ռուսական արտադրության, կորաձև: |
| 32 | **Այգեգործական եղաններ** | **հատ** | 7 | 2500 Եղաններ՝ այգեբանջարանոցային աշխատանքների համար, 4 մատերով, չճկվող, ռուսական արտադրության: |
| 33 | **Փոցխեր** | **հատ** | 14 | Նախատեսված այգեբանջարանոցային աշխատանքների համար, ռուսական արտադրության: |
| 34 | **Կացիններ** | **հատ** | 4 | Կացին երկաթյա միջին չափերի |
| 35 | **Ձեռքի սղոցներ** | **հատ** | 5 | Ձեռքի սողներ, պլաստմասայե բռնակով |
| 36 | **Էլեկտրական խրոց** | **հատ** | 2 | Էլեկտրական խրոց՝ միաբևեռ, հողանցումով,-16Ա |
| 37 | **խողովակներ** | **հատ** | 6 | Մետաղյա ճկուն խողովակ, 60 սմ երկարությամբ,նախատեսված ջրի ծորակի միացման համար |
| 38 | **Ռետինե խողովակ** | **մետր** | 30 | Կանաչապատ տարածքները ոռոգելու համար, 1/2"- չափի: |
| 39 | **Խողովակներ և պարագաներ** | **հատ** | 5 | Գոֆրեաձև խողովակ, նախատեսված լվացարանի միացման համար |
| 40 | **Դռան փականներ** | **հատ** | 2 | Գերմանական դռան փականներ |
| 41 | **Փականների մասեր** | **հատ** | 4 | Փականների միջուկներ՝ ZEN ֆիրմային կամ  համարժեքը |
| 42 | **Կուտակիչ մարտկոցներ** | **հատ** | 2 | Մարտկոց նախատեսված NIKON թվային ֆոտոապարատի համար, Ճապոնական արտադրության, չափերը՝ 35x52 մմ |
| 43 | **Հատակ մաքրելու ձող, պլասմասե կամ փայտյա** | **հատ** | 2 | 1,5-2 մ երկարության, պլաստմասե պոչով, ամրացված կտորե մաքրող մասին, դույլով, գույնը՝ կապույտ կամ դարչնագույն: |
| 44 | **Գոգաթիակներ** | **հատ** | 6 | Պլաստմասե՝ տարբեր գույների: |
| 45 | **Ցախավել** | **հատ** | 35 | Բակը մաքրելու համար, բնական, տեղական արտադրության, քաշը չոր վիճակում (700-800)գ, երկարությունը՝ (85-90)սմ, ավլող մասի լայնքը (50-60)սմ: |
| 46 | **Ձեռնոցներ** | **զույգ** | 150 | Գործվածքե ձեռնոցներ, նախատեսված բանվորական աշխատանքների համար, ձեռքերի ներսի կողմից՝ լաքապատված |
| 47 | **Աշխատանքային ձեռնոցներ** | **զույգ** | 10 | Ռետինե բարձրորակ ձեռնոցներ, գույնը՝ վարդագույն, տարբեր չափերի, անջրանցիկ |
| 48 | **Մեկուսիչ ժապավեններ օղակաձև** | **հատ** | 6 | Գլանափաթեթված ժապավեն 48 մմ՝ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ: |
| 49 | **Դույլ պլաստմասե** | **հատ** | 2 | Պլաստմասե, 7 լ տարողության, անվտանգությունը, մակնշումը և փաթեթավորումը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թվականի մայիսի 25-ի N 679-Ն որոշմամբ հաստատված ,Սննդամթերքի հետ շփվող պոլիմերային և դրանց հիմքով պլաստմասե արտադրանքների տեխնիկական կանոնակարգի: |
| 50 | **Դույլ ցինկապատ** | **հատ** | 12 | Դույլ պատրաստված ցինկապատ բարակաթերթ մետաղական թիթեղից, տարողությունը 10-12լ., մետաղի հաստությունը 0,35-0,55մմ, մետաղյա բռնակով: Բռնակի հաստությունը ոչ պակաս Փ4մմ: Բարձր որակի: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 51 | **Աղբարկղեր պլաստմասե** | **հատ** | **6** | Համբյուղատիպ, պլաստմասե, 10 դմ$^3$ տարողությամբ: բաց կապույտ կամ նուրբ դարչնագույն երանգների: |
| 52 | **Էկրանի մաքրման նյութեր** | **հատ** | **2** | Նյութեր՝ նախատեսված բոլոր տեսակի համակարգիչների էկրանները մաքրելու համար, դեզոդորանտի նման, 250 մլ տարողությամբ, բարձր որակի, եվրոպական արտադրության: |
| 53 | **Պոլիէթիլենային պարկ, աղբի համար** | **հատ** | **100** | Աղբի պոլիէթիլենային տոպրակներ՝ գունավոր, աղբը հավաքելու համար, 30 լիտր տարողությամբ: |
| 54 | **Պոլիէթիլենային պարկ,սննդային** | **հատ** | **1000** | Տոպրակներ՝ նախատեսված սննդի համար, 100 հատանոց տուփերով: |
| 55 | **Սննդի փաթեթավորման թաղանթներ** | **տուփ** | **5** | Պոլիմերային թաղանթ, որը նախատեսված է սննդի փաթեթավորման համար: Ապահովում է հերմետիկություն՝ սնունդը պահպանելով թարմ: Փաթեթը իր վրա ունի սուր ատամիկներ՝ պոլիմերային թաղանթի կտրման համար: Չափը՝ 50մ: |
| 56 | **Պառկելաթոռներ (շեզլոնգներ)** | **հատ** | **80** | Պառկելաթոռներ՝ նախատեսված լողափի հանգստի համար, պատրաստված բարձր որակի էլաստիկ պլաստմասսայից, արտաքին մակերեսը փայլուն, մեջքը՝ շարժական, սպիտակ գույնի, բարձր որակի, 186.5 x 62.5 չափերի, (ոչ չինական արտադրության) |
| 57 | **Ոչ գործվածքային կտոր** | **մետր** | **403** | Պոլիէստերից հաստ կտոր՝ որպես ծածկ օգտագործելու համար, կանաչ գույնի, չպատռվող, բարձր որակի |
| 58 | **Զանազան պարարտանյութեր 1** | **կիլոգրամ** | **750** | Ազոտական պարարտանյութ, միզանյութ ( կարբոմիդ ) $CO(NH_2)_2$ |
| 59 | **Զանազան պարարտանյութեր 2** | **կիլոգրամ** | **3** | Քլորոֆոս |
| 60 | **Զանազան պարարտանյութեր 3** | **լիտր** | **4** | Բ-58 |
| 61 | **Զանազան պարարտանյութեր 4** | **լիտր** | **6** | Ուրագան-ֆորտե |
| 62 | **Զանազան պարարտանյութեր 5** | **կիլոգրամ** | **2** | Ցինկի ֆոսֆատ |
| 63 | **Կիր (փոշի)** | **կիլոգրամ** | **20** | Սպիտակ գույնի, փոշիացված, 3-րդ տեսակի: |
| 64 | **Վրաններ** | **հատ** | **2** | Երկտեղանի, չկոտրվող ձողերով հավաքվող, կանաչ պաշտպանական գույնի հաստ կտորից, ունենա առանձին ծածկոց, 2 կողմից պատուհաններ, բարձր որակի |
| 65 | **քնապարկեր** | **հատ** | **10** | Քնապարկ 220x75սմ չափի, պոլիէստերի կտորից, անհատական պայուսակներով, հաստ, բարձր որակի |
| 66 | **Ճոպաններ** | **մետր** | **300** | Ճոպան մետաղական, 0.5սմ հաստությամբ |
| 67 | **Սրաքար** | **հատ** | **2** | Ձեռքի սրաքար նախատեսված գերանդի սրելու համար |
| 68 | **Դրոշներ** | **հատ** | **2** | ՀՀ դրոշ, 50սմx100սմ չափերի,դիմացկուն,չպատռվող կտորից |
| 69 | **Ակվարիումներ** | **հատ** | **2** | Ակվարիումներ ապակուց, ուղղանկյունաձև, 20 լիտր տարողությամբ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **70** | **Հականեխիչ (անտիսեպտիկ) և ախտահանիչ միջոցներ** | **լիտր** | **250** | Անտիսեպտիկ և դեզինֆեկցիոն ակտիվ մաքրող և սպիտակեցնող միջոց՝ նախատեսված բոլոր տեսակի զուգարանները մշակելու համար: Նախատեսված է բոլոր տեսակի բակտերիաների, սնկերի և այլ միկրոօրգանիզմների վարաքազերծման համար: Ազդեցությունը՝ 1 օր: Փաթեթավորումը՝ 4 լիտրանոց տարաներով: Պահպանման ժամկետը՝ 3 տարի՝ $0^0$C – $35^0$C-ում: Բարձրորակ: |
| **Պարտադիր պայման՝ բոլոր տեսակի ապրանքները պետք է լինեն բարձրորակ, չօգտագործված:** | | | | |
| **Մատակարարումը՝** | | | | **Բոլոր տեսակի ապրանքները Պատվիրատուի պահանջի հիման վրա՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում պետք է մատակարարվեն Ք. Սևան,Կարմիր Բանակի 56 հասցեով:** |

Հավելված 2
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով
ընթացակարգի հրավերի
N ՇՀԱՊՁԲ-11/11 (ՀՀԲՆՍԱՊ-ՇՀԱՊՁԲ-15/05) ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

**ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ**
**ԴԻՄՈՒՄ**

______________________________ -ն հայտնում է, որ ցանկություն ունի մասնակցելու
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

_______________________ -ի կողմից N ՇՀԱՊՁԲ-11/11 (ՀՀԲՆՍԱՊ-ՇՀԱՊՁԲ-15/05) ծածկագրով
Պատվիրատուի անվանումը

հայտարարված ընթացակարգի ______________________________________ չափաբաժնին
չափաբաժնի (չափաբաժինների) համարը

(չափաբաժիններին) և հրավերի (ծանուցման) պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտը:

________________________________ -ն հայտնում և հավաստում է, որ իր հիմնադրի
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իր հիմնադրին պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը սույն ընթացակարգին բացառվում է, բացառությամբ՝

1) պետության կամ համայնքների կողմից հիմնադրված կազմակերպությունների,
2) համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) մասնակցության դեպքերի:

______________________________ -ն հայտնում և հավաստում է, որ չունի գերիշխող
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

դիրքի չարաշահում և հակամրցակցային համաձայնություն:

__________________________________________ -ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)

____________________________________________ :
Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցե

______________________________________ ____________________
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

«_____» ___________ 2015թ.
(ամսաթիվը, ամիսը)

Հավելված 3
«ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/11» ծածկագրով
ընթացակարգի հրավերի
N ՇՀԱՊՁԲ-11/11 (ՀՀԲՆՍԱՊ-ՇՀԱՊՁԲ-15/05) ծածկագրով
ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

# Գ ն ի   ա ռ ա ջ ա ր կ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված N ՇՀԱՊՁԲ-11/11 (ՀՀԲՆՍԱՊ-ՇՀԱՊՁԲ-15/05) ծածկագրով ընթացակարգի հրավերը (ծանուցումը), այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ______________________________ -ն առաջարկում է պայմանագիրը կատարել
Ընթացակարգի մասնակցի անվանումը (անունը)
համաձայն հետևյալ գների՝

| Չափաբաժին-ների համարները | Գնման առարկայի անվանումը | Արժեք | ԱԱՀ-ն* | Պայմանագրի կատարման համար առաջարկված գինը (տառերով և թվերով) |
|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5=3+4 |
| 1 | «Գնման առարկայի չափաբաժնի անվանումը N1» | | | |
| 2 | «Գնման առարկայի չափաբաժնի անվանումը N2» | | | |
| | | | | |
| … | … | | | |
| … | … | | | |

- *3-րդ սյունյակում նշված «Արժեքը» ներառում է ինքնարժեքը և շահույթը:*
- *Եթե մասնակիցն ավելացված արժեքի հարկ վճարող է, ապա փվյալ պայմանագրի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարվելիք ավելացված արժեքի հարկի գումարը նշվում է 4-րդ սյունակում:*

______________________________ ______________________
Մասնակցի անվանումը (անունը) (ղեկավարի պաշտոնը, Անուն Ազգանունը) (ստորագրությունը)

Կ.Տ.

«_____» __________ 2015թ.
(ամսաթիվը, ամիսը)

**Հավելված 4**
*նախագիծ*

**ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ, ՍԱՆՀԻԳԻԵՆԻԿ ԵՎ ԼՎԱՑՔԻ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ**
№ ՇՀԱՊՁԲ-11/11 (ՀՀԲՆՍԱՊ-ՇՀԱՊՁԲ-15/05)

ք. Սևան «_____» «____________» 2015թ.

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրենի ժ/պ Ա.Գնդոյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և « ---------------------» ---------ն, ի դեմս -------------------------ի (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված **տնտեսական, սանհիգիենիկ և լվացքի նյութեր** (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

## 2. Մատակարարման պայմանները

2.1. Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:
2.2. Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

## 3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

**3.1 Գնորդն իրավունք ունի՝**

3.1.1. Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.
3.1.2. Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.
ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.
բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.
3.1.3. Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.
3.1.4. Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը.
3.1.4.1. Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝
ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.
բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,
3.1.5. Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

**3.2. Գնորդը պարտավոր է՝**

3.2.1. Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:
3.2.2. Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.
3.2.3. Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:
3.2.4. Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

**3.3. Վաճառողն իրավունք ունի՝**

3.3.1. Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2. Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3. Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4. Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5. Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

**3.4. Վաճառողը պարտավոր է՝**

3.4.1. Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2. Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3. Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4. Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5. Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6. Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7. Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8. Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

## 4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1. Սույն պայմանագի ընդհանուր գինը կազմում է ----------------- ( --------------------------------) **ՀՀ դրամ**՝ ներառյալ ԱԱՀ-ն: Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

4.2. Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

## 5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1. Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

## 6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1. Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.2. Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3. Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

## 7. Կողմերի պատասխանատվությունը

7.1. Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2. Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3. Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4. Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5. Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7. Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 9. Այլ պայմաններ

9.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

